


Գ Ր Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՆԹԵՊԻ ՀԱՅՈՑ»*

Ամերիկացիական Անթեպի-
ցիների (Ա. Ա.) միություն-
նը, Լոս-Անջելոսում (Կալի-
ֆորնիա, ԱՄՆ), լույս է
ընծայել «Պատմություն
Անթեպի հայոց» անուն
երկհատոր գիրքը՝ աշխա-
տասիրությամբ և խմբա-
գրությամբ մանկավարժա-
կան գիտությունների, փի-
լոսոփայության և պատ-
մության պրոֆեսոր Գեորգ
Ա. Սարաֆյանի, որ նույն-
պես անթեպցի է:

«Պատմություն Անթեպի
հայոց» գրքի Ա. հատորը
բաղկացած է $ԼՔ + 1088 =$
 1120 , իսկ Բ. հատորը՝
 $ԼՔ + 806 = 838$ մեծագիր
էջերից: Ունի նաև երկու
փոքրագիր քարտեզներ, ո-
րոնցից Ա. հատորին կըց-
վածը ցույց է տալիս Ան-
թեպ քաղաքի մանրամասն
տեղագրությունը (տոպո-
գրաֆիան), իսկ Բ. հատո-
րին կըցվածը՝ Անթեպի շրջ-
անակը:



լորս ծագելից ցրվի ընկած
հայրենակիցներից ոմանց
աշխատակցելու դժկամու-
թյունը, ոմանց գրքի հա-
ջողության մասին ունեցած
սկեպտիկությունը, ոմանց
էլ «անցյալի վրա սև դիծ
քաշելու» սովեստ խրատ-
ները: Հենց այս պատճա-
ռով էլ արդարանալի է
պրոֆ. Սարաֆյանի առաջա-
բանում արտահայտած ու-
րախությունը. «Ուրախ ենք,
— գրում է նա, — որ վեր-
ջապես հասավ այն բարե-
բաստիկ օրը, Անթեպի հա-
յոց պատմության երկու
սովոր հատորներում տպա-
գրության թվականը, երբ
աշխատասիրող խմբագրա-
պետը, վերստին ազատ
շունչ մը քաշելով, իր ուսե-
րեն վար կդնե պատասխա-
նատվության այն ժանր բե-
ռը, որու տակ ինքզինք ընկ-
նըված կզգար մոտավորա-
պես վերջին երեք տարիներ
ու ընթացքին»:



Ինչպես գրքիս աշխատասիրողը հայտարարում է
առաջաբանում, նման մի պատմագրի պատրաստու-
թյան ծրագիրը գոյություն է ունեցել ավելի քան երի-
սուն տարիներից ի վեր, սակայն նրա հրատարակու-
թյունը հազիվ հնարավոր է եղել իրականացնել 1953
թվականին միայն, երբ տարվա տընաչան աշխատան-
քից հետո:

Արդարև, Մայր Հայրենիքից հեռու, արտասահման-
յան երկրներում, հարազատ պետության հովանավո-
րությունից և հոգատարությունից զրկված հայ գրողի
համար 2.000 մեծագիր էջերով ու հարյուրավոր կլի-
շեններով— ինչպիսին է Անթեպի հայոց պատմագիր-
քը— սովորաբար զգալի հրատարակելը հեշտ գործ
է՝ և՛ նպատակահարմար ու արժեքավոր նյութերի հա-
վաքման, և՛ նրանց ճաշակավոր և անթերի հրատա-
րակության համար անհրաժեշտ՝ արտասահմանյան
պայմաններում՝ մեծագումար ծախսերն ապահովելու
տեսակետից, եթե նույնիսկ զանց առնենք աշխարհի

«Պատմություն Անթեպի հայոց» գիրքը բաժանված
է մի երկվեցյակ գլխավոր մասերի, որոնցից առաջին
վեցյակը (ներածական, Հնախոսական-հնապատմա-
կան, Անթեպի և շրջանակի պատմությունը, Եկեղեցա-
կան-հիմնական, Կրթական-մշակութային և Քաղաքա-
կան-ազատագրական) լույս են տեսել Ա. հատորում,
իսկ երկրորդ վեցյակը (Պատմություն Անթեպի ինք-
նապաշտպանության կռիվների, Առևտրական-տնտեսա-
կան, Ազգագրական, Պատմա-հուշագրական, Անթեպ-
ցիներ Սփյուռքի մեջ և Կենսագրականներ) Բ. հատո-
րում:

Այստեղ նշելի կետ է այն, որ գրքիս աշխատասի-
րողը ուղիղ վերաբերում է ցուցաբերել իր՝ բազմաթիվ
աշխատակիցների հանդեպ, պահելով յուրաքանչյուր
աշխատակցի ստորագրությունը գրած հոդվածի ներ-
քո, մինչդեռ նման բնույթի ուրիշ երկասիրողները բա-
վականացել են միայն աշխատակիցների կենսագրու-
թյուններում զետեղելով հաճախ այս տեսակ անորոշ
մի բացատրություն. «Հատորիս աշխատակցած է
տնտեսական, կրթական, կրոնական և քաղաքական
կյանքի մասին այլևայլ տեղեկություններ հայթայթե-
լով» (տե՛ս «Մարաշ» պատմագրի աշխատակիցների

* «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհա-
կալությամբ ստացել է Ա. Ա. միության կողմից իր
հասցեին ուղարկված «Պատմություն Անթեպի հայոց»
գիրքը, երկու հատորով— ԽՄԲ.:

բաժինը): Պատմագրքում,— եթե նա մի հեղինակի երկասիրությունը չէ,— հոգվածագիրների ստորագրությունը՝ դրած հոգվածի ներքո՝ կարևոր է և՛ երկասիրողի համար, որպեսզի որևէ հոգվածի բնագրատության դեպքում, թիրախը լինի նույնիսկ հոգվածագիրը, և՛ հոգվածագրի համար, որպեսզի ամբողջ գրքի գնահատության դեպքում, երկասիրողի հետ հոգվածագիրներն էլ ունենան գոհունակության իրենց արդար բաժինը:



«Պատմություն Անրեպի հայոց» գիրքը ուսումնասիրելիս, ընթերցողի ուշադրությունից չի վրիպում այն արդյունավետ աշխատանքը, որը կատարել է Կիլիկիայի Բաբեկեն Աթոռակից Կաթողիկոսը, իր ծննդավայր քաղաքի՝ Անթեպի և շրջակա պատմական վայրերի (Մովթ, Տլուբ, Հոսմկլա) պատմությունը մոտացության ճիշտներից փրկելու գործում: «Հայ Անթեպի պատմության համար» նրա գրի առած «նոթ»-ները (առաջին անգամ լույս տեսած 1925 թվականին Հայկական հրատարակչության «Մուրիա-հայ» տարեցույցում), ինչպես նաև նրա հեղինակած «Մովթ-դղակ, Տլուբ և Հոսմկլա» գիրքը (տպագրված Վիեննայում 1904 թվականին) և Ֆրանսիական գրավող բանակների Կիլիկիայից հեռանալու (1921 թ.) հետևանքով հայ բնակիչներից դատարկված ծննդավայրի հիշատակը անթեպիցիների հիշողությունների մեջ վերապրեցնելու նպատակով արտասահմանյան մամուլում նրա հրատարակած հոգվածները հիմնարարների գեր են կատարել «Պատմություն Անրեպի հայոց» գրքի աշխատակիցներից ոմանց համար: Եվ գրքիս երկասիրողը արդար հատուցում է արել մեծանուն Կաթողիկոսին՝ գրքում զետեղելով ո՛չ միայն նրա կենսագրականը (Փառեն եպիսկոպոսի գրչից), այլև իր կողմից ստորագրված հատուկ հոգված, որով պանծացնում է «Կիլիկիո կաթողիկոսաց պատմությունը» գրքի ներհուն հեղինակի անմոռաց հիշատակը:

Սակայն զարմանում եմ, թե ինչո՞ւ Բաբեկեն Ս.ի հիշատակին այնքան հիացական տողեր նվիրող պրոֆ. Սարաֆյանը չի հիշատակում լուսահոգի մեծ հոգևորականի նվիրվածությունը էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության և Հայաստանին. նվիրվածություն, որի անհերքելի փաստը տվել էր նա իր «Կաթողիկոսական ուխտ»ով, կարգացված Հալեպի Սրբոց Փառանից մանկանց անվան եկեղեցու խորանի առջև, Կաթողիկոս օծման պահին (1931 թվականի ապրիլի 26-ին) և էջմիածին ճանապարհորդելու ծրագրով, որը շկարողացավ այն ժամանակ իրագործել Սիրիայի և Լիբանանի ֆրանսիական բարձր կոմիսարի հարուցած դժվարությունների հետևանքով, բայց անպայման պիտի իրականացներ անշուշտ, եթե անողորմահեշ չկտրեր նրա կյանքի թելը 1936 թվականի հուլիսի 9-ին, Բեյրութում:

«Պատմություն Անրեպի հայոց» գրքի բովանդակությունը արժեքավորելու տեսակետից պատմական արժեք ունեցող ուսումնասիրություններ և հոգվածներ

ունեն Կիլիկիայի Կաթողիկոսության միաբան Փառեն եպիսկոպոս Մելքոնյանը, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ Նորայր եպիսկոպոս Պողարյանը, Հալեպի Կրթասիրաց դպրոցի վաստակավոր տնօրեն Գրիգոր Պողարյանը, Վահան Քյուրքչյանը, Ա. Ն. Նազարը, վերապատվելի Ե. Ս. Փասունին, Արտավազդ արքեպիսկոպոսը, պրոֆ. Գ. Ա. Սարաֆյանը, քահանաներ, վերապատվելիներ, բժիշկներ, արհեստավորներ և այլն, բոլորն էլ ձգտելով այն բանին, որ իրենց ծննդավայր քաղաքի՝ Անթեպի վերաբերող ո՛չ մի դեպք ու դեմք դուրս չմնան գրքից:

Պետք է խոստովանել, որ պատմագրքիս ամենածավալուն աշխատակիցն է եղել վերապատվելի Ե. Ս. Փասունին, նախագահ՝ Պեհեսնիկյան, որովհետև հայրը Պեհեսնիցի գաղթի է Անթեպ, ապա՝ Փասունի, որովհետև մեծ հայրը Փասունից է (ԺԱ. դարի նշանավոր հայ իշխան Գող Վասիլի ուսմանը), նրա գրած 5 հոգվածները, մտերմաճան ինքնակենսագրության հետ միասին, Ա. և Բ. հատորներում գրավել են ընդամենը 503 էջ, այսինքն՝ ամբողջ գրքի բաոորը: Այդ 5 հոգվածների միջև, պատմական-ազգագրական տեսակետից ամենաշահեկաններն են «Անթեպի շրջանակի աշխարհագրականը և Անթեպ քաղաքի տեղագրականը» (Ա. հատոր, էջ 37—325) և «Անթեպի հայոց բարբառախոսությունը» (Բ. հատոր, էջ 318—380) վերնագրայինները: Մնացյալ 3-ը վերաբերում են Հայ Ավետարանականության և Ամերիկայի բողոքական միությունների Անթեպում հաստատման պարագաներին և նրանց այնտեղ ունեցած գործունեությանը:

Վերապատվելի Ե. Ս. Փասունին, որպես պատմական գիտությունների հետևող, իր իսկական գերի մեջ է երևում մասնավորապես «Անթեպի շրջանակի աշխարհագրականը և Անթեպ քաղաքի տեղագրականը» հոգվածում: Նա մանրազնին ու խղճամիտ պրպտումներ է կատարել ձեռքի տակ ընկած հայ և օտար հնագույն և նորագույն աղբյուրներում՝ չոկելու համար այն ամեն ինչը, որ հարաբերություն է ունեցել Եփրատացիների երկրի հետ, որի մաս է կազմել ծննդավայր քաղաքը՝ Անթեպը, շրջանի պատմական վայրերով (Մովթ, Տլուբ, Հոսմկլա, Արբլ, Ճարապուտ կամ հիթիթների Կարկեմիշը և այլն):

Անթեպ քաղաքի անվան ծագման և այնտեղ հայերի բնակեցման կապակցությամբ վերապատվելի Փասունին պաշտպանում է այն գաղափարը, թե Կիլիկյան Անթեպի հայ հիմնադիրները եկել են հին հայկական Տուրուբերան նահանգի Դալառ գավառը ներկայացնող արդի Թուրաֆ գավառի կենտրոն Անթափ-ից, համաձայնելով Բաբեկեն եպիսկոպոսի (ապա Կաթողիկոս) հետ, որ վերև հիշված «նոթ»-ներում, զետեղված 1925 թվականին գրել էր. «Այնքապ ձևը նոր է: Միջնադարյան հայացի ձևն է Անթափ, որ եղած է Անթեպ, և ըստ

1. Անթեպի հրապարակագիր Ա. Ն. Նազարեն ևս գրել է, որ Այնթափի ճշտագույն անունն է Անթափ, որը, ըստ Մատթեոս Ուտհայեցու, Միքայել Ասորու և նրանց ժամանակակից պատմիչների, ունեցել է «մեծ, անառիկ, անուաճիմ» տիրողներն էլ:

իս այս է շիտակ ձևը: Պետք է գիտնալ, որ Հայաստանի մեջ ալ կա Անքափ ըսված տեղ մը, էրզրումի նահանգին մեջը:

Մեջ բերելուց հետո Ն. Աղոնցի այն մատնանշումը, ըստ որում Ասորեստանի Թագադարաւասար Ա. թագաւորը Հայկական բարձրավանդակի վրա կատարած մեծ արշավանքի առթիւ, Նաիրիի 23 իշխանութիւններէ կարգին հիշում է Nasabi, ANTIABE և Sururia երկրները, իսկ հին հռոմեական ուղեգրական տախտակներէ Հայաստանին պատկանող մասի վրա եւ նշանակված կան Nasabi, ANTEBE, Surio անուն հանգրվանները, որոնք, Մակվարդի և Ն. Աղոնցի հաստատմամբ, գտնվում էին Մանազկերտի և հայկական Բագավանի (արդէ Ուշ Քիլիսե) միջև, ու նշույց հետո, թէ արձանագրական Անթիապե-ն (Antiape) և ուղեգրական Անթեպե-ն (Antebe) դիրքով ճշդ-տիւ Համապատասխանում են արդէ Թուրք բազայի կենտրոն Անքափ-ին, վերապատվելի Նոյա Քասունին եղբակացնում է. «Արդ, որովհետև Անքափ (Անթեպ, Այնթապ) անվան մեր շրջանակին մեջ չենք հանդիպիր քրիստոնեական թվականի ԺԱ—Ժ դարին առաջ, մինչդեռ Հայաստանի Անքափ-ն անհիշատակ ժամանակներն ի վեր գոյութիւն ունի, պիտի ըսենք, որ այս անունը (այսինքն՝ Անքափ անունը. — Մ. Հ.) վերին Հայաստանին փոխադրված է Եփրատացւոց երկիրը, և ամենայն հավանականութիւնով հայկական արտագաղթի մը միջոցով:

Եւսկ, այդ հայկական արտագաղթի կամ բռնագաղթի ժամանակն ու պարագաները մեզի մատնանշված են ասորի պատմիչ՝ Միքայել Ասորլո (ըստ ասորիներէ բնագրին) և Բարհեբրեոսի կողմէն: Ասոնք իրենց ժամանակագրութեանց մեջ կպատմեն, որ Բյուզանդիոնի կայսերը, մասնավորապես Նիկիֆորոս Փոկաս և Հովհաննես Զմշկիկ, Եփրատացւոց երկրները—Մելիտինէ, Կոմմագենէ, Կյուտիստիկա, և այլն—աւարաց ձեռքէն կտ խելին հետո՝ գտան, թէ անոնք ամալացած են, որովհետև արաբ-մահմեդական ժողովուրդը շուրջով քրիստոնէից տիրապետութեան երթարկիլ՝ Հարավային Սիրիա և Իրաք քաղված էր: Բյուզանդացիք, ասոր փոխարեն, Միջագետքի ասորիքիստոնյա ժողովուրդը հրավիրեցին գալ հաստատվիլ իրենց նոր գրաված նահանգներուն մեջ՝ մինչև Մելիտինէ (Մալաթիա—Մ. Հ.): Բայց դեռ երկիրը չիցվեցավ բնակչութեամբ: Ուստի բյուզանդացիք իրենց գրավման տակ գտնվող Արևմտյան Հայաստանին, մասամբ հոժարակամ և մասամբ բռնի, շատ հայ ժողովուրդ գաղթեցուցին մեր կողմերը: Ասիկա պատահած է Թ. դարու վերջերը և Ժ. դարուն ալ շարունակված՝ մինչև անոր վախճանը:

«Այսպես, կհամոզվինք, թէ՛ Անքափ անունն իսկապես Արևմտյան Հայաստանէն Եփրատացւոց եր-

1. Հոգվածագրի բնագրին և անթեպեիների գործածած ուղեգրութեան հարազատ մնալու համար է, որ Antiape-ն՝ Անթիապե և Antebe-ն՝ Անթեպե ենք գրում, այլապես ուղիղ տառադարձութեամբ պետք էր գրվէին Անթաբե և Անտեբե, և հետևաբար Անթեպե է՝ Անտեբ:

կիրը փոխադրված նախահայկական անուն մըն է, թէ՛ Անթեպ ձևն ավելի ուղիղ է քան Այնթապ, և թէ՛ վերջինս պարզապես այդ նախապատմական անձանոթ ծագումով անվան արարերէն՝ ստուգաբանութիւն մը տալու ջանքին արդյունքն է»:

Մենք տրամաբանական ենք գտնում՝ վերապատվելի Ն. Քասունու սույն եղբակացութեանը, թէ՛ կիլիկյան Անթեպի հիմնադիր հայ բնակչութեանը, հռոմեական կամ բռնի, գաղթած լինի Արևմտյան Հայաստանի Տուրուքերան նահանգի Անթափ քաղաքից, և թէ՛ այդ հայերը վերապրեցնելու համար իրենց ծննդավայրի հիշատակը, նոր բնակավայրը մկրտած լինեն իրենց հին բնակավայրի անունով:

Նմանօրինակ իրողութիւններ պակաս չեն հայ ժողովուրդի պատմութեան մեջ, Եւֆրատի (1587—1628 թ. թ.) օրով Զուլայից բռնի գաղթեցված հայերը Պարսկաստանում հիմնել են Նոր-Զուլան:

Դեռևս նոր ժամանակներում, 1921—1922 թ. թ. Կիլիկիայից հեռացած հայերը, Բյուրլոնում (Լիբանան) իրենց հիմնարկած Թաղերը մկրտել են իրենց բնիկ ծննդավայրերի անուններով՝ Նոր-Հաջրն, Նոր-Մարաշ, Նոր-Աղանա, Նոր-Սիս, Նոր-Ամանոս, Նոր-Ցողկաւո:

1921 թվականին Զեյթունից նահանջած հայերի մնացորդներից 40 բնուսնիքներ, Անտիոքի շրջանի մաս կազմող Մուսա-լեռան (Զեբել-Մուսա) վեց հայաբնակ գյուղերի կողքին հիմնել էին Նոր-Զեյթունը, զեթ հոգու խորքում անեղծ պահելու համար իրենց արծաւուրդն ծննդավայրի հիշատակը:

Այժմ, Հայաստանի գեղեցիկ ու բնագրապատկերային մայրաքաղաքի՝ Երևանի շին ու բազմամարդ ավաններէն են Արաբկիրը, Զեյթունը, Մարաշը, Կիլիկիան, Բյուրլոնիան, Խարբերդը, Մալաթիան, Սեբաստիան: Այդ ավանների բնակիչների մի ստվար մասը կազմում են Թյուրքիայում թողնված նույնանուն քաղաքների հայերը, որոնք զանազան թվականներին արտասահմանից հոժարակամ ներգաղթել են Մայր Հայրենիք: Ինչպես Թյուրքիայում, Հայաստանում եւ կան Ամասիա (Ղուկասյանի շրջան) և Ագիաման (Մարտունու շրջան) անուն գյուղերը:

Մեթոգիկ և շահեկան վերլուծութիւն է նաև վերապատվելի Ն. Քասունու «Անթեպի-հայոց բարբառախոսութիւնը» վերնագրով ուսումնասիրութիւնը (Բ. հատոր, էջ 313—380), Ընթերցողը նրանում կարող է

1. «Անթեպ»ի արարերէն ձևն է «Այնդաբ»: Ոմանք այս բառը ստուգաբանում են Այնեբ-բայի (عين ايب) ձևով, քաղցրաբայուր, լավ աղբյուր՝ նշանակութեամբ: Բայց այս ստուգաբանութիւնը ճիշտ չէ, որովհետև «Այնդաբ» արարերէն գրվում է آيند: Այս ուղղագրութիւնից ենելով, մեր արարերէնի և պարսկերէնի ուսուցիչը, մի անթեպի փաթեթավոր խոշա, ասում էր թէ «Այնդաբ» բառը կազմված է արարերէն (آين) այն=ալ, ալք և պարսկերէն (د) դար=շարուն, փայլուն բառերից, ուստի «Այնդաբ» նշանակում է շողակն: Ըստ նրան, քաղաքը «Այնդաբ» է կոչվել, որովհետև բնակիչներն ունեցել են փայլուն, շողողաքոյ ալքեր:

գտնել 1517 թվականից սկսյալ օսմանյան եկեղեցիների կողմից ոչ միայն Անթեպի, այլև (բացի Զեթու-նից և Հալեմից, Բեյլանից, Քեսարից և Մուսա-լիսան գյուղերից) ամբողջ Կիլիկիայի հայերին պարտադրված թյուրքախոսության հետևանքով կորած հայերին լեզ-վի մնացորդ հայկական ավանդությունների, օրօրնե-րի, հարսանեկան երգերի, ժողովրդական աղոթքների և անեծքների պատառիկներ և մի բառգրքույկ՝ ան-թեպցիների խոսած թյուրքերենում գործածված հա-յերեն բառերի մասին:



Անթեպի հայոց պատմագրքում, շահեկան հոդված-ներից է վերապատվելի Ներսես Սարյանի «Հռոմկլա և շրջակայքը» վերնագրով ուսումնասիրությունը: Պատ-մասեր ընթերցողը նրանում ամփոփ կերպով գտնում է այն ամեն ինչը, որ վերաբերում է միջնադարյան հայ եկեղեցական պատմության մեջ փայլուն տեղ գրաված սթանլի Հոռնկլային և այնտեղ ապրած ու գործած կաթողիկոսներին, մասնավորապես տիեզերա-լույս Ներսես Շնորհալուն, լատինականության զոհ՝ Գրիգոր Ե. Քարավեժին ու Կոստանդին Բ. Կատուկե-ցուն և հուսկ ուրեմն եգիպտացիների կողմից գերե-վարված Ստեփանոս Դ. Հռոմկլացուն:

Կենսորոնի վերաբերող ավանդություններից մեկն էլ այն է, թե՛ անառիկն Հռոմկլան նենգությունը գրավի-լու համար Բաղդադի արաբ խալիֆաներից մեկը բազմաթիվ սնդուկների մեջ իբր վաճառականական ապրանք արաբ զինվորներ տեղավորելով, ձմեռ ժա-մանակ ներկայանում է Հռոմկլայի հայոց կաթողիկոսին և խնդրում նրանից վարձքով պահել այդ սնդուկները մինչև մոտալուտ գարունը: Կաթողիկոսը հոժարում է, բայց խալիֆայի խաղախությունը երևան է գալիս նույն գիշերն իսկ, երբ հայ բերդագահները նշմարում են սնդուկները դուրս ելնող այլազգիներին, ուստի սնդուկները մի առ մի գցում են վանքի ստորոտից անցնող Եփրատ գետի մեջ՝ ջերմեռանդորեն երգելով Շնորհալու «Շնորհա՛ մեզ, Տէ՛ր» մեղեդին:

Կիլիկիայի պատմության վերջնագույն էջերը պիտի կազմեն անշուշտ դրվագները այն մեծ ողբերգության, որ խաղացվեց հայ ժողովրդի գլխին, Համաշխարհային առաջին մեծ պատերազմի զինադադարից (11 նոյեմ-բերի 1918 թ.) մինչև 4 հունվարի 1922 թ. պարփակ-վող ժամանակաշրջանում, գլխավոր գերակատարու-թյամբ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և այլ արևմտա-եվրոպական պետությունների:

Մեր նյութից դուրս է՝ այդ ողբերգության սրտա-մորմոք դրվագները տալ այգտեղ, բայց անհրաժեշտ ենք նկատում նշել, թե «Անթեպի հերոսամարտը» իր արդյունքովը — այսինքն՝ անթեպաբնակ հայերի ֆի-զիկական կյանքը թշնամու յաթաղաններից ազատելու գեղեցիկ արդյունքովը — պատիվ է բերում հայկական մարտունակության: 1919 թվականի հունվարի սկզբից մինչև 1922 թվականի հունվարի սկիզբը, այսինքն Անթեպի անգլիական գրավումից մինչև Ֆրանսիական գրավող բանակների Անթեպից և ամբողջ Կիլիկիայից

հեռանալը, և մասնավոր ազգայնական թյուրքերի դեմ մղած գոյամարտի 70 օրերի ընթացքին, ինչպիսի՜ ծանր զրկանքների և զոհողությունների շնթարկվեցին Անթեպի հայերը: Եվ նրանք հաղթեցին անգլիական, ֆրանսիական և ազգայնական թյուրքերի բաղաբական խարդավանքը, ինչպես հաղթահարել էին «Ավետարա-նականություն» անվան տակ թաքնված ամերիկյան այլ տեսակի խարդավանքը, ամերիկյան կրթարաննե-րին համադրելով քառից ոչ պակաս հայկական դրպ-րոցներ, որոնց մասին վաստակավոր ուսուցիչ Գրիգոր Պողարյանի և ուրիշների գրվեց ելած հետաքրքիր տե-ղեկություններ կան «Պատմություն Անթեպի հայոց» գրքում:

Անգլիական և ֆրանսիական գրավման տարիների (1919—1922 թ. թ.) ընթացքին Անթեպում տեղի ու-նեցած դեպքերի հետաքրքրական մանրամասնությունը գտնում ենք Բ. հատորում (էջ 7—273), Գեորգ Պա-պոյանի «Անթեպի հերոսամարտը» վերնագրով ժամա-նակագրության մեջ: Ինչպես հայտնի է, անգլիական և ֆրանսիական կայսերապաշտ պետությունների գաղու-թարարական շահերի բախման կենտրոններից մեկը ե-ղավ Կիլիկիան՝ 1919—1921 թվականներին: Ֆրանս-սիացիք պարտավորվեցին ընդմիշտ հեռանալ Կիլի-կիայից, որովհետև 1919 թվականի սեպտեմբերին, երբ դեռևս անգլիական ուժերը գտնվում էին Կիլիկիայի հո-ղերի վրա, Անգլիան Թյուրքիայի հետ կնքել էր պաշտ-նի համաձայնագիր, ըստ որում Անգլիան երաշխավո-րում էր Թյուրքիայի ամբողջական անկախությունը, համաձայնագիր, որը ճամբա հարկից Լոնդոնի և Լո-զանի ժողովներին, որտեղ թաղվեց տաճկահայ գաղթը, Անգլիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և արևմտա-եվրոպական այլ պետությունների մեղսակցությամբ:



Անթեպի հայոց պատմագիրը զերծ չէ տպագրական թերություններից: Օրինակ, Բ. հատորի առաջին էջը գրավող և իբր Անթեպի շրջանակը ներկայացնող փոքր բարտեզը շունի ո՛չ զեղադրական արժեք, ո՛չ էլ նպատակասլացություն: Եթե նա լինեք գունավոր և լավ տպագրված, և բացի դրանից կցվեք նաև մի ուրիշ բարտեզ, որտեղ արձանագրված լինեին այդ վայրերի պատմական անունները, ինչպես այդ կա-տարվում է Հայաստանում հրատարակված պատմա-կան գրքերում, այդ վայրերի անժանոթ ընթերցողը դժվարություն չպիտի կրեր գրքում լույս տեսած պատ-մական հոդվածներում հիշատակված վայրերը ճշշ-տորոշելու գործում:

Մենք կանգ չենք առնում պատմագրքում սպրդած տառախալների և տողերի խաղաղամեծների հաճա-խակիության վրա, բայց ուզում ենք նշել, թե՛ երբ սխալները վերաբերում են մարդկանց անուններին, իհարկե նրանք կստանան որոշ կարեւորություն: Այս-օրինակ սխալներից տանք մի քանիսը — Ա. հատորի 301-րդ էջում հիշվում է «Ասառ Սեբաստացի» նշանա-վոր հայ բժիշկը», սակայն մի քիչ ստորև նույն բժիշ-կը կոչվում է «Ասառ Սեբաստացի»: Դարձյալ նույն հատորում, էջ 397, Անթեպից Պետրոս վարդապետ

Քյուրթյուրք, որ 10 ամիս կաթողիկոս էլ եղել է էջմիածնում, բազմիցս հիշվում է Կաթապետ անունով: Նման սխալ տպագրությամբ Տաեկեթը՝ եղել է Տաեկեթա, Փոկաք՝ Փոկոս և այլն: 1913 թվականին վարդապետ կրթարանի շրջանավարտների շարքում հիշված Հմայակ Տուլպազյանի համար (Ա. հատորի 734-րդ էջում) գրվել է «հեղինակ տարեցույցների և ուսուցիչ Եղիա Տուլպազյանը, որ այժմ էլ ուսուցիչ է Հայաստանում, Նոր-Արաբկիրի միջնակարգ դպրոցում, իսկ Հմայակ Տուլպազյանը Հալեպում, Բաղդադի կայսրանի կայարանապետն է, որ մեծ օգտակարություն ունեցավ 1946—1947 թվականներին հայրենադարձների դեպի Բեյրութ փոխադրության գործում:



Անթեպի հայոց պատմագիրքի ունի նաև մի շատ զգալի թերություն, այն է բացակայությունը մի հատուկ բաժնի, որտեղ հարմար կլիներ ներկայացնել հայ ժողովրդի սրբություն սրբոցն եղող և Սովետական Միության 16 ռեպուբլիկաների շարքում տարեցտարի հսկայաքայլ բարգավաճող Հայաստանի մայրական ծոցում մասնագիտությունների տիրացած անթեպցի մտավորական նոր սերնդի կյանքը: Այդ նոր սերնդին են պատկանում Սյուլահյան Ռուբենի 4 դավակները. ա) խաշիկը, շրջանավարտ Երևանի Բժշկական ինստիտուտից, բժիշկ ներքին հիվանդությունների. բ) Առնը, Երևանի նուրբ օգործարանում ինժեներ-քիմիկոս. գ) Ժանեթը, շրջանավարտ Պետական համալսարանի Ֆիլոզոֆիական ֆակուլտետի եվրոպական գրականության և լեզուների բաժնից, այժմ դիրեկտորի տեղակալ. դ) Անթեյը, շրջանավարտ Պետական համալսարանի Ֆիլոզոֆիական ֆակուլտետի Հոգեբանության-տրամաբանության բաժնից, այժմ ասպիրանտ՝ ընդհանուր լեզվաբանության գծով. Քյուրթյուրքյան Հովսեփը (Մովսեսի), շրջանավարտ Երևանի մանկավարժական ինստիտուտի Հոգեբանության բաժնից, ասպիրանտ, այժմ դասախոս նույն ինստիտուտում: Սրա տիկինն է Երևանի օպերայի հայտնի սոպրանո մեներգչուհի Արմինե Քյուրթյուրքյանը. Գեորգ Տիգրանի խոլովյանը, շրջանավարտ Պետական համալսարանի Հոգեբանության-տրամաբանության բաժնից, այժմ ասպիրանտ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում փիլիսոփայության գծով. Նազարեթ Անդրեասի Նալբանդյանը, գերազանցիկ ուսանող Պետական համալսարանի Ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետի. Հիմնոյան Անդրանիկը, Երևանի Կարլ Մարքսի անվան Պոլիտեխնիկական ինստիտուտի Հիդրոֆակուլտետում ուսման գերազանցիկ. վաղեմի ուսուցիչ Տիգրան Մեսրոպյանի որդին՝ Մեսրոպ Մեսրոպյանը և աղջիկը՝ Սիրվարդը, առաջինը գերազանցիկ ուսանող Հայաստանի Կոնսերվատորիայի դիրիժորական բաժնում, երկրորդը ավարտած Թատերական ինստիտուտը. Հակոբ Գանդաճյանը (Հարությունի), շրջանավարտ Երևանի Օտար լեզուների ինստիտուտից.

Անժել Քյուրթյուրք, վարպետ դերձակ Արսեն Ապալանյանը, Ելիսանյան Միհրանի աղջիկը, Դեմիրջյան Գրիգորի և Հակոբի աղջիկները և ուրիշ շատ շատերը:

Ժիշտ է, որ արտասահմանյան կրթական հաստատություններում դաստիարակված հայ երիտասարդներից ոմանք օտար հողի վրա մեկ-մեկ փայլում են գրական, գիտական, գեղարվեստական և այլ ասպարեզներում, բայց նրանց հաջողությունը շունի և շի կարող ունենալ հայկական դրոշմ և հետևաբար հավերժություն: Նրանց հաջողությունը վաղանցուկ է ասուլի լույսի նման, մինչդեռ այսօր, Հայաստանում հասակ առնող մտավորական երիտասարդության արձանագրած հաջողությունները անընդլիկորեն հավերժական պիտի մնան, որովհետև նրանք կապ ունեն հայրենակերտության սրբազան գործի հետ, ընդգրկում են համամարդկային լայնարձակ հորիզոններ, սնվում՝ ազգային-հայրենական աղբյուրների անապակ ջրով և տաքանում Հայրենիքի սրբազան հուրով, հայրենի պետության հովանու ներքո:

Թի արտասահմանում, մասնավորապես Ամերիկայում ապրող հայ նոր սերունդը ուժանում է և այլասերվում, դրա ապացույցներից մեկը տեսնում ենք Անթեպի հայոց պատմագրքի Բ. Հատորի վերջին մասում կենսագրական ունեցող խմբիկաբանակ անթեպցի երիտասարդների և երիտասարդուհիների անունները քննելիս. Բապերթ, Էտվերտ, Էնն, Չարլի, Պեյրեր, Ժեք, Փիթերս, Կրեյտիտ, Հերրի Հեյ, Պեթի Ճեյն, Տորիս, Չարլզ, Ուիլյամ, Կրեյլերի և այլն: Եվ ասե՛լ, թե սրանք հայի անուններ են...: Այդպիսիները ուշադրությամբ կարդալու են սովետահայ բանաստեղծ Հովհաննես Երազի հետևյալ տողերը.

«

Էլ ո՛ր մեր լույս լեզուն մարել՝
Արևմուտքի դեմ խոնարհել.
Ու թող այնտեղ Ջեմման՝ Ջեմմա,
Աստղիկն այստեղ Աստղիկ մնա:
Քանզի ամեն ազգի անուն
Իր տարազն է, իր իսկ լեզուն:
Ինչո՞ւ հազնես ձեն ամենի
Երբ քոնն ունես, ո՛վ քաղթենի:
Երբ իր գույնից,
Իր անունից,
Իւ մայր լեզվից ձեռն քաղող՝
Վերջն էլ կաա իր մայր հողը:
Աշխարհը դաշտ, ազգերն իր մեջ
Մաղիկներ են պես-պես ու պերճ:
Ամեն ժողովի իր բույրն ունի,
Իր գույնն ունի,
Անունն ունի,
Տարազն ունի իր հայրենի:
Ինչքա՛ն ծաղիկ բույր ու շաղոտ՝
Աշխարհն այնքան անուշահոտ.

Դու քո Շուշանն ինչպե՞ս թողես՝

Օտար դաշտի Լիլիան քաղես.

Ո՞վ է բռնել մեր կոկորդից,

Որ ձեռ քաշենք Հայկ ու Վարդից,

Ծաղիկներից Ալագյազի,

Շուշաններից մեր Մասիսի

Ու թող ծաղկի թե՛ Լիլիկը,

Թե՛ մեր Շուշան—Շուշանիկը.

Քանզի ամեն ազգի անուն

Իր տարազն է, իր իսկ լեզուն,

Իր սրբությունն հավերժական.

Եվ օրենքն է ողջ մարդկության՝

Իր ազգինը ով չիրի,

Թշնամին է ողջ ազգերիս:

(«Մեր մարդկանց անունները» պոեմից)



Չնայելով վերև նշված թերություններին, պետք է ասել, որ շնորհակալ գործ են կատարել պրոֆ. Գ. Ա. Սարաֆյանն ու Ա. Ա. միությունը, երկասիրելով և հրատարակելով իրենց ծննդավայր քաղաքի՝ հայ Անթեպի մասին պատմական, ազգագրական, ազատագրական, տնտեսական, մշակութային և վիճակագրական տեղեկություններով և վավերաթղթերով հարուստ այս մեծածավալ պատմագիրքը: Հայ բանասերներն ու պատմագիրները, «Պատմություն Անթեպի հայոց» գրքում, վստահաբար պիտի դտնեն նկատառության արժանի այնպիսի նյութեր և ատաղձներ, որոնք օգտակարություն կունենան հայ ժողովրդի բնագիտության պատմությունը լրիվ գրի առնելու կարևոր գործում:

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

